



«Յունիբանկ» ԲԲԸ կանոնադրությունում փոփոխությունների առաջարկներ

N 1. Հաշվի առնելով այն, որ բանկի կողմից ֆինանսական գործառնությունների կատարումը կարգավորվում է տարբեր օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով, առաջարկվում է կանոնադրության 3-րդ գլխի 3.4 կետը վերաշարադրել հետևյալ կերպ՝

Գործող խմբագրություն	Նոր խմբագրություն
3.4. Բանկը ֆինանսական գործառնությունները կատարում է համաձայն «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի պահանջների:	3.4. Բանկը ֆինանսական գործառնությունները կատարում է համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների:

N 2. Հաշվի առնելով այն, որ կանոնադրական կապիտալի մեծությունից կախված բանկի կողմից պարտավորումների թողարկման մասով ՀՀ օրենսդրությամբ սահմանափակում առկա չէ, առաջարկվում է կանոնադրության 6.3 և 6.4 կետերը վերաշարադրել, ներառելով ՀՀ օրենսդրությամբ բանկերի կողմից պարտավորումների թողարկման հնարավորություններին առնչվող նոր դրույթներ՝

Գործող խմբագրություն	Նոր խմբագրություն
6.3 Բանկի կողմից թողարկված բոլոր պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չի կարող գերազանցել Բանկի կանոնադրական հիմնադրամի մեծությունը:	6.3 Բանկը կարող է ժողովի կողմից հաստատված՝ աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով սահմանված կարգով աշխատակիցների միջև տեղաբաշխել (տրամադրել) Բանկի բաժնետոմսեր:
6.4 Պարտատոմսեր կարող է թողարկվել միայն Բանկի հայտարարված կանոնադրական հիմնադրամի լրիվ վճարումից հետո:	6.4 Բանկը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնք տալիս են Բանկի պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման իրավունք:

N 3. Հաշվի առնելով այն, որ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններով սահմանված է, որ բանկերը պետք է ունենան Ռիսկերի կառավարման և Համապատասխանության ապահովման գործառույթ իրականացնող պատասխանատուներ, առաջարկվում է վերաշարադրել կանոնադրության 9-րդ գլխի վերջին նախադասությունը, ինչպես նաև կանոնադրության մեջ ավելացնել 16-րդ և 17-րդ գլուխներ հետևյալ կերպ՝

Գործող խմբագրություն	Նոր խմբագրություն
Բացի վերը նշված կառավարման մարմինների՝ Բանկն ունի նաև գլխավոր հաշվապահ և ներքին աուդիտի ստորաբաժանում:	Բացի վերը նշված կառավարման մարմինների՝ Բանկն ունի նաև գլխավոր հաշվապահ, ներքին աուդիտի, ռիսկերի կառավարման գործառույթ իրականացնող և համապատասխանության ապահովման գործառույթ իրականացնող ստորաբաժանումներ:
	16. Ռիսկերի կառավարման գործառույթ իրականացնող ստորաբաժանում 16.1 Ռիսկերի կառավարման գործառույթ իրականացնող ստորաբաժանման ղեկավարը պաշտոնի նշանակվում և ազատվում է Վարչության նախագահի կողմից՝ Խորհրդի համաձայնությամբ: 16.2 Ռիսկերի կառավարման գործառույթ իրականացնող ստորաբաժանումը՝ ա) բացահայտում, գնահատում է Բանկի գործունեությանը բնորոշ ռիսկերը, տալիս է Բանկի ռիսկի ընդհանուր նկարագիրը. բ) հսկողություն և մոնիտորինգ է իրականացնում բացահայտված ռիսկերի նկատմամբ, ապահովում է դրանց արդյունավետ կառավարումը. գ) իրականացնում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված ռիսկերի կառավարմանն առնչվող այլ գործառույթներ:

	16.3 Ռիսկերի կառավարման գործառույթ իրականացնող ստորաբաժանման ղեկավարը Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի ռիսկերի կառավարման ռազմավարությունը, ռիսկի ընդունելի սահմանաչափը, ինչպես նաև առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունները (ներքին իրավական ակտերը), 16.4 Ռիսկերի կառավարման գործառույթ իրականացնող ստորաբաժանման ղեկավարն եռամսյակը մեկ անգամ Բանկի Վարչության և Խորհրդին ներկայացնում է հաշվետվություն Բանկի ռիսկերի նկարագրի և ռիսկերի կառավարման գործընթացների վերաբերյալ՝ Բանկի կողմից սահմանված ձևով և բովանդակությամբ: 17. Համապատասխանության ապահովման գործառույթ իրականացնող ստորաբաժանում 17.1 Համապատասխանության ապահովման գործառույթ իրականացնող ստորաբաժանման ղեկավարը պաշտոնի նշանակվում և ազատվում է Վարչության նախագահի կողմից՝ Խորհրդի համաձայնությամբ: 17.2 Համապատասխանության ապահովման գործառույթ իրականացնող ստորաբաժանումը՝ ա) ապահովում է Բանկի և Բանկի աշխատակիցների գործունեության համապատասխանությունը օրենքների, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին. բ) ապահովում է Բանկում պատասխանատու վարվելակերպի ձևավորումն ու պահպանումը. գ) գնահատում է Բանկի գործունեության վրա օրենքների և այլ իրավական ակտերի հնարավոր փոփոխությունների ազդեցությունը և դրանց հետ կապված հնարավոր ռիսկերը. դ) իրականացնում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված համապատասխանության ապահովմանն առնչվող այլ գործառույթներ: 17.3 Համապատասխանության ապահովման գործառույթ իրականացնող ստորաբաժանման ղեկավարն եռամսյակը մեկ անգամ Բանկի Վարչության և Խորհրդին ներկայացնում է հաշվետվություն Բանկում համապատասխանության ապահովման գործընթացների վերաբերյալ՝ Բանկի կողմից սահմանված ձևով և բովանդակությամբ:
N 4. Բանկի Խորհրդի և վարչության միջև իրավասությունների հստակեցման, ինչպես նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 21.6 կետին համապատասխանեցնելու նպատակով, առաջարկվում է կանոնադրության 11.24 կետի ի) և իա) ենթակետերը, ինչպես նաև 11.25 կետը շարադրել հետևյալ կերպ՝	
Գործող խմբագրություն 11.24 Խորհուրդը լիազորված և իրավասու է՝ ի) սահմանել վարկավորման, ֆինանսավորման, դրամարկղային սպասարկման, տնտեսական գործունեության, արժեթղթերով գործառնությունների կատարման պայմաններն ու կարգը, իա) քննարկել վերստուգումների ստուգումների նյութերը, տարածքային	Նոր խմբագրություն 11.24 Խորհուրդը լիազորված և իրավասու է՝ ի) հաստատել Բանկի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերը և ֆինանսական գործառնությունների իրականացման պայմանները,

ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները, 11.25. Սույն կանոնադրության 11.24. կետով սահմանված լիազորությունները Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցեր են և չեն կարող փոխանցվել գործադիր մարմնի լուծմանը, բացառությամբ 11.24-րդ կետի իթ) ենթակետով սահմանված աշխատատեղերի մասով իրավասությունը: Վարչության նախագահին տրամադրվում է համապատասխան աշխատակիցների աշխատավարձի չափի վերանայման իրավասություն՝ Խորհրդի հաստատված Բանկի տարեկան աշխատավարձային ֆոնդը գերազանցելով ոչ ավել քան 1%-ով:	իա) քննարկել ստուգումների և վերստուգումների նյութերը, 11.25. Սույն կանոնադրության 11.24. կետով սահմանված լիազորությունները Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցեր են և չեն կարող փոխանցվել գործադիր մարմնի լուծմանը, բացառությամբ 11.24-րդ կետի ի) ենթակետով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման պայմանների հաստատման իրավասությանը, որը Բանկի Խորհրդի որոշմամբ կարող է փոխանցվել Բանկի Վարչությանը, ինչպես նաև 11.24-րդ կետի իթ) ենթակետով սահմանված աշխատատեղերի մասով իրավասությունը: Վարչության նախագահին տրամադրվում է համապատասխան աշխատակիցների աշխատավարձի չափի վերանայման իրավասություն՝ Խորհրդի հաստատված Բանկի տարեկան աշխատավարձային ֆոնդը գերազանցելով ոչ ավել քան 1%-ով:
12.15. Վարչությունը լիազորված և իրավասու է՝ - Բանկի կանոնադրությանը համապատասխան, որոշում ընդունել բանկային նոր ծառայությունների ներդրման մասին,	12.15. Վարչությունը լիազորված և իրավասու է՝ - Բանկի կանոնադրությանը համապատասխան, որոշում ընդունել բանկային նոր ծառայությունների ներդրման մասին, ինչպես նաև Բանկի Խորհրդի թույլտվության և որոշման հիման վրա սահմանել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման պայմանները,
N 5. Առաջարկվում է կանոնադրության 12.13 կետի 6-րդ պարբերությունը շարադրել հետևյալ կերպ՝	
Գործող խմբագրություն	Նոր խմբագրություն
12.13 Վարչության անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմք են հանդիսանում հետևյալ հանգամանքները՝ - Վարչության նիստերից անհարգելի պատճառներով հաճախակի բացակայելը,	12.13 Վարչության անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմք են հանդիսանում հետևյալ հանգամանքները՝ - մեկ տարվա ընթացքում ոչ հարգելի պատճառով նիստերի կեսից ավելին բացակայելու դեպքում,
N 6. Առաջարկվում է կանոնադրության 10.14 կետի երկրորդ նախադասությունը վերաշարադրել հետևյալ կերպ՝	
Գործող խմբագրություն	Նոր խմբագրություն
10.14 Ժողովի գումարման մասին ծանուցումը հրապարակվում է Բանկի պաշտոնական կայքում և առնվազն 1000 տպաքանակ ունեցող օրաթերթում:	10.14 Ժողովի գումարման մասին ծանուցումը հրապարակվում է Բանկի պաշտոնական կայքում և azdarar.am կայքում:
N 7. Առաջարկվում է կանոնադրության մեջ ավելացնել 10.21 կետ՝ հետևյալ բովանդակությամբ	
10.21 Բանկի տարեկան կամ արտահերթ ժողովների անցկացման ժամանակ քվեարկությունը կարող է անցկացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Բանկին տրամադրված համապատասխան ծրագրային ապահովման կիրառմամբ:	
N 8. Առաջարկվում է կանոնադրության 16.1 կետը շարադրել հետևյալ կերպ՝	
Գործող խմբագրություն	Նոր խմբագրություն
16.1 Բանկը պարտավոր է ինտերնետում՝ Բանկի տնային էջում, մշտապես հրապարակել՝	16.1 Բանկը պարտավոր է իր պաշտոնական կայքում մշտապես հրապարակել՝

Предложения по внесению изменений в устав ОАО «Юнибанк»

№ 1. Учитывая то, что осуществление банком финансовых операций регулируется различными законодательными и правовыми актами, пункт 3.4 главы 3 устава предлагается переписать следующим образом:

Действующая редакция	Новая редакция
3.4 Банк осуществляет финансовые операции в соответствии с требованиями закона РА О валютном регулировании и валютном контроле	3.4 Банк осуществляет финансовые операции в соответствии с требованиями законодательства РА.

№ 2. Учитывая тот факт, что в законодательстве РА нет ограничения на выпуск облигаций банком в зависимости от размера уставного капитала, предлагается переписать статьи 6.3 и 6.4 устава, включив новые положения в связи с возможностью выпуска банком облигаций в соответствии с законодательством РА:

Действующая редакция	Новая редакция
6.3 Сумма номинальной стоимости всех облигаций, выпущенных Банком, не может превышать размер уставного капитала Банка.	6.3 Банк вправе распределять (эмитировать) акции Банка среди сотрудников в порядке, установленном программой акционирования сотрудников, утверждаемой общим собранием акционеров Банка.
6.4 Выпуск облигаций возможен только после полной оплаты объявленного уставного капитала Банка.	6.4 Банк может выпускать конвертируемые облигации и иные ценные бумаги, дающие право конвертировать облигации и иные ценные бумаги Банка в акции.

№ 3. Учитывая то, что поправки в закон РА "О банках и банковской деятельности" предусматривают, что в банках должны быть ответственные по управлению рисками и комплаенсу, предлагается переписать последнее предложение главы 9 устава, а также в уставе добавить главы 16 и 17 следующего содержания:

Действующая редакция	Новая редакция
Помимо вышеупомянутых органов управления, в Банке также имеются главный бухгалтер и подразделение внутреннего аудита.	Помимо вышеупомянутых органов управления, в Банке также имеются главный бухгалтер, подразделение внутреннего аудита, подразделение по управлению рисками и подразделение по обеспечению соответствия.
	16. Подразделение, осуществляющее функцию управления рисками 16.1 Руководитель подразделения, осуществляющего функцию управления рисками, назначается на должность и освобождается от должности председателем Правления с согласия Совета. 16.2 Подразделение, осуществляющее функцию управления рисками: а) идентифицирует и оценивает риски, присущие деятельности Банка, дает общую характеристику риска Банка; б) контролирует и осуществляет мониторинг выявленных рисков, обеспечивает эффективное управление ими; в) выполняет иные функции, связанные с управлением рисками, определенные нормативными правовыми актами Центрального банка, а также внутренними правовыми актами Банка. 16.3 Руководитель подразделения, осуществляющего функцию управления рисками, представляет на утверждение Совета стратегию управления рисками Банка, допустимый лимит риска, а также отдельные политики управления рисками (внутренние правовые акты). 16.4. Руководитель подразделения, осуществляющего функцию управления рисками, ежеквартально представляет Правлению и Совету Банка отчет о профиле рисков Банка и процессах управления рисками, согласно форме и содержанию, определяемыми Банком.

	17. Подразделение, осуществляющее функцию обеспечения соответствия 17.1 Руководитель подразделения, осуществляющего функцию обеспечения соответствия, назначается на должность и освобождается от должности председателем Правления с согласия Совета. 17.2 Подразделение, осуществляющее функцию обеспечения соответствия: а) обеспечивает соответствие деятельности Банка и работников Банка требованиям законов, иных правовых актов, в том числе внутренних правовых актов Банка; б) обеспечивает формирование и поддержание ответственного поведения в Банке; в) оценивает влияние возможных изменений законов и иных правовых актов на деятельность Банка и возможные связанные с ними риски; г) выполняет иные функции, связанные с обеспечением соблюдения установленных нормативными правовыми актами Центрального банка, а также внутренними правовыми актами Банка. 17.3 Руководитель подразделения, осуществляющего функцию обеспечения соответствия, ежеквартально представляет Правлению и Совету Банка отчет о процессах обеспечения соответствия в Банке, по форме и содержанию, определяемыми Банком.
<i>Н 4. В целях уточнения компетенций между Советом и Правлением Банка, а также для соблюдения пункта 21.6 закона РА "О банках и банковской деятельности" предлагается изменить подпункты и) и иа) пункта 11.24 устава, а также пункта 11.25 следующим образом:</i>	
Действующая редакция	Новая редакция
11.24 Совет уполномочен и правомочен и) определять условия и порядок кредитования, финансирования, кассового обслуживания, хозяйственной деятельности, операций с ценными бумагами, иа) обсуждать материалы повторных проверок, отчетов руководителей территориальных подразделений.	11.24 Совет уполномочен и правомочен и) утвердить внутренние правовые акты Банка, определяющие порядок осуществления финансовых операций, а также условия осуществления финансовых операций, определенных законом Республики Армения "О банках и банковской деятельности", иа) обсуждать материалы проверок и повторных проверок.
11.25. Полномочия, определенные пунктом 11.24, настоящего устава, являются вопросами, отнесенными к исключительной компетенции Совета, и не могут быть переданы на решение исполнительному органу, за исключением полномочий по должностям, определенным в подпункте ит) пункта 11.24. Председатель Правления наделен полномочиями по пересмотру размера заработной платы соответствующих работников, превышающей утвержденный Советом годовой фонд оплаты труда Банка не более чем на 1%	11.25. Полномочия, определенные пунктом 11.24, настоящего устава являются вопросами, отнесенными к исключительной компетенции Совета, и не могут быть переданы на решение исполнительному органу, за исключением полномочий по утверждению условий осуществления финансовых операций, определенных подпунктом и) пункта. 11.24, которые по решению Совета Банка могут быть переданы Правлению Банка, а также компетенции в отношении рабочих мест, определенной в подпункте ит). Председатель Правления наделен полномочиями по пересмотру размера заработной платы соответствующих работников, превышающей утвержденный Советом годовой фонд оплаты труда Банка не более чем на 1%.
12.15. Правление уполномочено и правомочно: - Принять решение о внедрении новых банковских услуг в соответствии с уставом банка,	12.15. Правление уполномочено и и правомочно: - В соответствии с Уставом Банка принимать решение о внедрении новых банковских услуг, а также на основании разрешения и решения Совета Банка устанавливать условия осуществления финансовых операций, определенных законом Республики Армения "О банках и банковской деятельности",
<i>Н 5. Абзац 6 пункта 12.13 устава предлагается изложить в следующей редакции:</i>	

Действующая редакция	Новая редакция
12.13 Основанием для досрочного прекращения полномочий членов Правления являются следующие обстоятельства - частое отсутствие на заседаниях Правления по неуважительным причинам	12.13 Основанием для досрочного прекращения полномочий членов Правления являются следующие обстоятельства: - отсутствие на более чем половине заседаний Правления по неуважительной причине в течение года.
<i>№ 6. Второе предложение пункта 10.14 устава предлагается переписать в следующей редакции:</i>	
Действующая редакция	Новая редакция
10.14 Уведомление о созыве Общего собрания акционеров публикуется на официальном сайте Банка и в газете тиражом не менее 1000 экземпляров.	10.14 Уведомление о созыве общего собрания акционеров публикуется на официальном сайте Банка и на сайте azdarag.am.
<i>№ 7. Предлагается добавить в уставе пункт 10.21 следующего содержания:</i>	
10.21 Во время годовых или внеочередных собраний Банка голосование может проводиться также в электронной форме с использованием соответствующего программного обеспечения, предоставленного Банку Центральным депозитарием Армении.	
<i>№ 8. Пункт 16.1 устава предлагается изложить в следующей редакции:</i>	
Действующая редакция	Новая редакция
16.1 Банк обязан регулярно публиковать в сети Интернет, на домашней странице Банка:	16.1 Банк обязан регулярно публиковать на официальном сайте Банка: